ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«15» մայիսի 2025 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ԸՆՏԱՆԻՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Մայիսի 15-ը ամբողջ աշխարհում 1993 թվականից ի վեր ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի որոշմամբ նշվում է որպես Ընտանիքի միջազգային օր:

Հայաստանն այս կարևոր օրը նշում է 2011 թվականից՝ ընդգծելով ընտանիքի դերն ու արժեքը հասարակության կյանքում:

Ընտանիքը հանդիսանում է հասարակության հիմքը, մեր ավանդույթների, հոգևոր արժեքների ու մշակութային ժառանգության պահպանողը: Այն միջավայր է, որտեղ ձևավորվում է մարդը, ամրապնդվում սերը, պատասխանատվությունն ու հոգատարությունը՝ որպես մարդկային հարաբերության բարձրագույն արժեք:

Ամուր ընտանիքներն են, որ դառնում են հզոր պետության հիմք՝ նպաստելով կայունությանն ու բարգավաճմանը: Եվ այսօր, ինչպես միշտ, ընտանիքի բարեկեցությունը շարունակում է մնալ առողջ հասարակության կարևոր չափանիշը:

Շնորհավորում եմ Ընտանիքի միջազգային օրվա առթիվ: Թող բոլորիս ընտանիքներում իշխեն խաղաղությունը, սերն ու ներդաշնակությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ